

---

**ՕՏԱՐ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ  
ԿԱՅՄՐՈՒԹՅԱՆ ՈՉ ՄԱՀՄԵՂԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-  
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՄԱՍԻՆ (XVII-XVIII դդ.)**

ԲՐՈՒՏՅԱՆ Մ. Ա.

XVII դ. Օսմանյան կայսրությունը աստվածապետական միապետություն էր, որտեղ դուրանը անփոխարինելի ու միակ օրենսգիրքն էր: Դրանով էր ղեկավարվում ն՝ քաղաքական, ն՝ կրոնական կյանքը: XV դ. Բյուզանդական կայսրության անկմամբ հիմք դրվեց արևելքում մահմեդականների տիրապետության ամրապնդմանը, որը սկզբնավորվել էր Մեհմեդ II Ֆաթիհի օրոք: Նրա կողմից քրիստոնյաներին որոշ ազատություններ տալը չէր բխում դուրանի սկզբունքներից կամ սուլթանի մարդասիրությունից և ժամանակավոր բնույթ էր կրում: Դրա ապացույցը եղավ հարկային, սոցիալական ծանր քաղաքականությունը, որ կիրառեցին Մեհմեդը և նրա հաջորդները կայսրության ոչ մահմեդական տարրերի նկատմամբ:

Պատմագրությունը իր հետաքրքրության կիզակետում է պահել Օսմանյան կայսրության ոչ մահմեդական ժողովուրդների սոցիալ-տնտեսական կյանքի ուսումնասիրումը, սակայն այս բնագավառում պատմաբանների կարծիքները երբեմն հակասական են: Հարցին միակողմանիորեն է մոտենում թուրքական պատմագրությունը, որն ամենուր փորձում է ցույց տալ այն անգո իրողությունը, թե իբր ոչ մահմեդականները Օսմանյան կայսրությունում ապահովված են եղել «արտոնյալ» պայմաններով:

Կայսրության մայրաքաղաք Ստամբուլը ծաղկեցնելու համար բացի վերաբնակեցումից հարկավոր էր այն դարձնել միջերկրածովյան առևտրի կենտրոն: Այս առումով օսմանցիները կարիք ունեին առևտրում օտար վաճառականների հետ կապեր ունեցող հմուտ մարդկանց<sup>1</sup>: Ըստ անգլիացի պատմաբան Ռ. Մանտրանի, արևմտյան վաճառականների համար հեշտ էր գործ ունենալ հայերի, հույների կամ հրեաների հետ, ուստի կայսրությունն այնքան է կարևորում նրանց դերը, որ ժամանակավոր թեթև հարկային քաղաքականություն է վարում<sup>2</sup>:

Իրենց պետության համար անհրաժեշտ տարրերին թուրք սուլթանների կողմից որոշ «արտոնություններ» տալու փաստը լրիվ գլխիվայր է ներկայացնում թուրք պատմաբան Սադի Քոչաշը: Ըստ նրա, միակ տարբերությունը, որ եղել է թուրքերի և ոչ մահմեդականների միջև, վերջիններիս՝ զինապարտությունից ազատ լինելն է: Հայերը, հույներն ու հրեաները, իբր, օգտվելով այս ազատությունից, տիրել են կայսրության առևտրական ու տնտեսական ոլորտներին, մինչդեռ թուրքերը հաճախ պա-

---

<sup>1</sup> **Mantran R.**, *Foreign Merchants and the Minorities in Istanbul during the Sixteenth and Seventeenth Centuries* (Braude B. *Christians and Jews in the Ottoman Empire*, vol. I), NY-L, 1982, p. 127.

<sup>2</sup> Դրանից օգտվելով՝ օտար առևտրականները երբեմն հանդես են գալիս հրեական ազգանուններով (նույն տեղում, էջ 131, 132):

տերազմներում կորուստներ կրելով «գրկվել» են տնտեսապես և թվաքանակով աճելու հնարավորությունից. «...կայսրության հիմնադրման համար միայն թուրքերն էին արյուն թափում, մյուս բոլոր քաղաքացիներն իրենց բոլոր ջանքերը ներդրել են կապիտալ կուտակելու, բարեկեցիկ ու խաղաղ կյանք վարելու համար»<sup>3</sup>:

Ավելի իրատեսական է թուրք պատմաբան Հալիլ Ինալչիքի կարծիքը, որը թեև երբեմն ցայտուն ընդգծում է Մեհմեդ II-ի և նրա հաջորդների կարծեցյալ համակրանքը քրիստոնյա բնակչության, նկատմամբ, սակայն չի անտեսում ոչ մահմեդական բնակչության դերը կայսրության տնտեսական կյանքում. «Օսմանցիների կարծիքով, հարուստ վաճառականներին գրավելը երկիրը հարստացնելու և գանձարանը լցնելու ձև է, ուստի կառավարությունը ընդունում էր հազարավոր հրեաների»<sup>4</sup>: Եթե օսմանյան կառավարությունը իսկապես հավասարության նշան էր դնում իր բոլոր հպատակների մեջ, ինչը նշում է նաև Ինալչիքը, ապա դժվար թե թուրք պատմիչները, բացասական գույներով նկարագրեին Ռում Մեհմեդ փաշային, որը մահապատժի էր ենթարկվել իր հույն հայրենակիցներին որոշ արտոնություններ տալու համար<sup>5</sup>: Իրականում եթե պետությունը ինչ-որ չափով խթանում էր քրիստոնյա առևտրականի աշխատանքը, ապա երկու նպատակ էր հետապնդում. նախ՝ զարգացնել երկրի տնտեսությունը, ապա՝ հարստացնել պետական գանձարանը: Դա իրականացվում էր ծանր հարկերի միջոցով: Կառավարությունը միայն առերես էր հավասարաչափ հարկեր պահանջում բոլոր բնակիչներից. այդ մասին են վկայում թուրքական վավերագրերը: Դրանցից մեկի համաձայն՝ մահմեդականը կամ ոչ մահմեդականը կաշի, յուղ, մեղր և այլ ապրանքներ քաղաք ներմուծելու համար 40 ակչե արժեցող ապրանքի դիմաց պարտավոր էր վճարել մեկ ակչե<sup>6</sup>: Սակայն հայտնի է, որ մահմեդականներից և քրիստոնյաներից հարկերի գանձման հարցում հավասարությունը ձևական էր: 1794-1795 թթ. մի փաստաթղթի համաձայն, հայերի և հույների ամուսնության թույլտվությունը տալիս էր ենիչերիների գնդի սարաջբաշին, որին ամուսնացող հարսնացուն պարտավոր էր վճարել 10 դուրուշ<sup>7</sup>: Սելիմ I-ի (1512-1520 թթ.) օրենքներից մեկի համաձայն՝ անհավատ ռայայից, եթե նա ամուսնացած է, անհրաժեշտ է գանձել տարեկան 20 ակչե: Ըստ մեկ այլ օրենքի՝ արգելվում էր անհավատներին ու մահմեդականներին բաղնիքում միննույն սրբիչը կամ ածելին օգտագործել<sup>8</sup>: Հայերից և հույներից գանձում էին ոչ միայն սահմանված հարկերը, այլև տեղական կառավարման մարմինները, հարկահաններն իրենց համար առանձին

<sup>3</sup> Koçaş S., *Tarih Boyunca Ermeniler ve Türk-Ermeni İlişkileri*, Ankara, 1967, s. 60.

<sup>4</sup> Inalchik H., *The Ottoman Empire: Conquest, Organization and Economy*, London, 1978, p. XII-121.

<sup>5</sup> Babinger F., *Mehmed the Conqueror and His Time*, Princeton-New-Jersey, 1978, p. 454.

<sup>6</sup> Faroghi S., *Towns and Townsmen of Ottoman Anatolia Trade, Crafts and Food Production in an Urban Setting (1520-1650)*, Cambridge, 1984, p. 60.

<sup>7</sup> Բարթիկյան Հ., Նյութեր գաղութահայ պատմության (Լրաբեր հասարակական գիտությունների, 1987, N 2, էջ 89-90):

<sup>8</sup> Тверитинова А. С., *Книга законов султана Селима I, М., 1969, с. 73*: Այս հեղինակը բերում է նմանատիպ բազմաթիվ օրինակներ:

հարկեր էին սահմանում: Դրանցից էին՝ հագուստի, մթերքի, ճանապարհածախսի և այլ հարկերը, որոնք զանձվում էին անկանոն ձևով:

Թուրքական պատմագրությունը նշում է, որ կայսրությունում ոչ մահմեդականներն իբր ունեցել են դավանանքի հավասարաչափ ազատություն: Եթե դա այդպես է, ապա դժվար թե ֆրանսիացի պատմաբան Ուբիչինիին զարմացներ այն, որ թուրք պատմիչները Քյոփրուլու Չադե Մուստաֆային XVII դ. շնորհել են «առաքինի» անունը նրա համար, որ թույլ էր տալիս քրիստոնյաներին կառուցել եկեղեցիներ նույնիսկ գյուղերում<sup>9</sup>: Մա հազվադեպ երևույթ է, քանի որ բազում տեղեկություններ կան թուրքական կառավարության կողմից եկեղեցիներ ավերելու մասին: Եթե ավերվում էին եկեղեցիները, իսկ եկեղեցաշինության մասին խոսք անգամ չկա, ապա դժվար թե դավանանքի հավասարություն լիներ: Հայտնի է, որ, սկսած Մեհմեդ II-ից, սուլթաններն աստիճանաբար ավելացնում էին մզկիթների թիվը՝ քանդելով եկեղեցիները<sup>10</sup>: Փաստերը բավական շատ են, սակայն թուրքական պատմագրությունը փորձում է կոծկել այս ամենը: Սադի Քոչաշը, սուլթանների «բարեգթությունը» հասցնելով գազաթնակետին, այսպես է ներկայացնում իրողությունը: «Օսմանյան կայսրությունում քրիստոնյաներին տվել են դավանանքի նույնչափ ազատություն, քաղաքական և քաղաքացիական իրավունքներ, և նրանք, պատմական ոչ մի դարաշրջանում որևէ երկրում որևէ ցեղային կամ դավանանքի իրավական հանդուրժողականություն տեսած չլինելով, միայն Օսմանյան կայսրության կառավարման առկայությամբ են դա ստացել և գոյատևել»<sup>11</sup>: Նմանատիպ կարծիք է առաջ քաշում Է. Ուրասը, ըստ որի, Մեհմեդ Նվաճողից (1451-1481) մինչև Մահմուդ II-ը (1808-1839) ընկած ժամանակաշրջանում ոչ մի միջամտություն չկար ոչ մահմեդականների կրոնական և այլ գործերին<sup>12</sup>: Մա ունի պարզ բացատրություն. հիշյալ սուլթանները հեշտացրել էին իրենց գործը՝ ողջ համայնքի ներքին պատասխանատվությունը թողնելով կրոնական առաջնորդի վրա, ուստի անհրաժեշտություն չկա սուլթանների այս խորամանկությունը մարդասիրություն համարել:

Կայսրության համար շահեկան այն պայմանները, որոնցից ինքնաբերաբար որոշ արտոնություններ էին բխում ոչ մահմեդականների համար, Ուբիչինիին և մի քանի այլ պատմաբանների,

թույլ են տալիս ենթադրել,

<sup>9</sup> Ubicini M., *Letters on Turkey*, p. II, London., 1856, p. 44.

<sup>10</sup> Փափազյան Ավ., Թուրքական վավերագրերը Հայաստանի և հայերի մասին 16-19 դդ., Ե., 1999, էջ 181, 203: Այս մասին կան բազում տեղեկություններ: Հայտնի է 1564 թ. հրամանագիրը՝ ուղղված Կ. Պոլսի կադիին, որը վերաբերում էր նորակառույց եկեղեցիների ավերմանը: Մելիմ I-ի օրոք (1512-1520) հրաման է արձակվել բոլոր եկեղեցիների ավերման մասին, սակայն հույն պատրիարքը կարողացել է ապացուցել, որ այդ եկեղեցիները իրենց է տվել Մեհմեդ II-ը՝ որպես վկա ներկայացնելով երեք զառամյալ ենիչերիների: 1662 թ., Մեհմեդ IV-ի ժամանակ արձակված ֆերմանի համաձայն՝ պիտի ավերվեին Կ. Պոլսի այն եկեղեցիները, որոնք սկսել էին վերանորոգվել 1660 թ. հրդեհից հետո (Փափազյան Ավ., նշվ. աշխ., էջ 38):

<sup>11</sup> Koçaş S., նշվ. աշխ., էջ 59-60:

<sup>12</sup> Uras E., *The Armenians History and the Armenian Question*, Ankara, 1988, p. 370.

որ, օրինակ, հույների վիճակը Օսմանյան կայսրությունում ավելի նախընտրելի էր, քան Բյուզանդական կայսրության օրոք<sup>13</sup>:

Զանազան ուղղակի և անուղղակի հարկերից բացի, ոչ մահմեդականները արյան հարկ՝ դեվշիրմե էլ էին վճարում: Քրիստոնյաները պարտավոր էին իրենց մանկահասակ արու զավակներին հանձնել թուրքական իշխանությանը՝ որպես ենիչերի: Ֆ. Բաբինգերը, չնայած Մեհմեդ II-ի նկատմամբ անթաքույց համակրանքին, ցույց է տալիս իր բացասական վերաբերմունքը դեվշիրմեի նկատմամբ՝ հստակ ներկայացնելով նրանց վիճակը. «Ենիչերիների սերը դեպի սեփական երկիրը և տունը փոխարինվում էր կրոնական մոլուցքով ու ծայրահեղության հասնող հնազանդությամբ»<sup>14</sup>: Տիրող դասակարգը, հասկանալով դեվշիրմեի պատճառած ցավը, այն որպես պատժամիջոց էր օգտագործում անհնազանդների համար: Կան զանազան տեղեկություններ, որոնց համաձայն, կառավարությունը հրաման էր արձակել իր սեփական տան դռնից կախել այն քրիստոնյային, որը չէր ցանկանա իր որդուն հանձնել որպես ենիչերի: Որոշ տվյալներով, դեվշիրմեից ազատվում էին միայն նրանք, ովքեր հրաժարվում էին իրենց հողերից և սերնդեսերունդ կախման մեջ էին ընկնում թուրքերից<sup>15</sup>:

Հույն պատմաբան Ս. Վրյոնիսը չի ժխտում այն փաստը, որ եղել են դեպքեր, երբ քրիստոնյաները մահմեդականություն են ընդունել լավ պաշտոնի հասնելու համար: Նա բերում է օրինակներ, երբ Անատոլիայում և Բալկաններում մեծաթիվ քրիստոնյաներ ընդունեցին մահմեդականություն, որ ավելի բարձր դիրք զբաղեցնեն: Այս հեղինակը նշում է, որ այդ երևույթը ձևական էր. «Չնայած նյութական առավելություններին, որ տրվել էր մահմեդականություն ընդունելու համար, քրիստոնյաները մընում էին կրոնական համայնքի անդամներ, որոնք զրկված էին առաջնակարգ քաղաքացիությունից»<sup>16</sup>: Վրյոնիսը, սակայն, այն տեսակետին չէ, թե իբր քրիստոնյաները ողջունում էին մանկահավաքությունը: Նա գրում է. «Տարբեր առիթներով նշվել է, որ քրիստոնյա բնակչությունը կամ անտարբեր էր դեվշիրմեի նկատմամբ, կամ ողջունում էր այն, քանի որ դա նշանակում էր, որ ամենաբարձր պաշտոններն ու փայլուն հեռանկարները բաց կլինեն իրենց երեխաների համար: Ոչ ոք չի կասկածում, որ հեռանկար խոստանալով, մահմեդականները ցանկանում էին քրիստոնյաներին մղել այդ արարքին»<sup>17</sup>: Հայտնի է, որ ենիչերիները հարձակվել են քրիստոնյաներով բնակեցված տարածքների վրա, ուստի, կարծում ենք, որ դժվար թե որևէ ծնող, առաջնակարգ համարելով իր զավակի «ապագան», նրան ինքնակամ մղեր մայրասպանության կամ սեփական բնակավայրի ոչնչացման: Ս. Վրյոնիսը, բերում է փաստեր

ապացուցելու, որ մանկա-

<sup>13</sup> Ubicini M., նշվ. աշխ, էջ 41:

<sup>14</sup> Babinger F., նշվ. աշխ, էջ 448:

<sup>15</sup> Vryonis S., *Byzantium: Its Internal History and Relations with the Muslim World*, London, 1971, p. 244.

<sup>16</sup> Նույն տեղում:

<sup>17</sup> Նույն տեղում:

հավաքությունը իսկապես անընդունելի երևույթ էր քրիստոնյաների համար, որոնք, անշուշտ, նախընտրել են մեռնել, քան իրենց երեխաներին տալ մահմեդականներին<sup>18</sup>: Այդ փաստաթղթերը վկայում են, որ եթե նույնիսկ հնարավոր է եղել ազատվել դեվշիրմեից, ապա միայն մեծ զիջումների գնով: Արյան հարկի պատճառած ծանր ցավի արձագանքներ կան թե՛ հույն, թե՛ հայ աղբյուրերում:

Արմատապես սխալ է և կեղծիքի վրա է հիմնված նաև Ս. Շոուի կարծիքը, թե իբր ծնողները հաճախ էին երեխաներին ուղարկում ենիչերի դառնալու՝ մտածելով, որ նրանք այդպես առաջընթաց կունենան<sup>19</sup>:

Թուրքական պատմագրությունը ջանք չի խնայում մանկահավաքությունը կոծկելու համար: Կան թուրք հեղինակներ, որոնք ստրկության խայտառակ երևույթն արդարացնելու փորձեր են անում: Ս. Վրյոնիսը քննադատում է Թուրգութ Օզալին, քանզի վերջինս հայտարարել է, թե քրիստոնյաները նույնիսկ ուրախ էին, որ իրենց երեխաներին ենիչերի էին դարձնում՝ կարծելով, թե դրանով լուծվում էր նրանց ապագա բարեկեցության հարցը<sup>20</sup>: Քրիստոնյաներին բռնի կրոնափոխելու խայտառակ երևույթը Օզալը մեկնաբանում է թուրք նվաճողի ինքնագոհությամբ՝ կեղծելով պատմական փաստերը, մինչդեռ XVII դ. ականատես-հեղինակ Պ. Ռայկոտը, նկարագրելով մանկահավաքությունը, ավելացնում է. «Հնարավոր չէ պատկերացնել այն դիմադրությունը, որին հակված էին խեղճ քրիստոնյաները, որոնց եկեղեցիները արհամարհվում էին: Հրաշք է այն, որ, չնայած ողջ բռնությանը, քրիստոնեական հավատքը շարունակվում է...»<sup>21</sup>: Թ. Օզալը միակը չէ, որ նմանատիպ թյուր մեկնաբանություն է տալիս: Վերոհիշյալ պատմաբան Սադի Քոչաշը չափազանցված է ներկայացնում Օսմանյան կայսրության ոչ մահմեդական բնակչության «արտոնյալ» վիճակը<sup>22</sup>:

Հակաքրիստոնեական անգուսպ հայացքներով աչքի է ընկնում Ի. Օրթայլըն, ըստ որի, Օսմանյան կայսրության անկիրթ այս երիտասարդությունը (այսինքն՝ մանկահավաքության ենթարկվածները) XVIII դ. ստացան հեղինակություն, պետական պաշտպանություն<sup>23</sup>:

Ճկուն շարադրանքով գովաբանելով մահմեդական վարչակարգի անմարդկային վերաբերմունքը ենթակա բնակչության նկատմամբ՝ թուրք պատմաբանները «միամտորեն» զարմանք են հայտնում քրիստոնյաների՝

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 439-440: Առաջին փաստաթուղթը վերաբերում է 1430 թ., երբ Սինան փաշան Յանինան պաշարելու ժամանակ տեղի հույն բնակչությանը խոստանում է իրեն ենթարկվելու դեպքում նրանց չզերելարել, ազատել դեվշիրմեից, իսկ նրանց եկեղեցիները չավերել: Երկրորդ փաստաթղթի համաձայն, կալայթան գրավելուց հետո Մեհմեդ II-ը տեղի բնակչությանը ազատեց դեվշիրմեից՝ կրկին հնազանդ լինելու պայմանով:

<sup>19</sup> Shaw S., նշվ. աշխ., էջ 114:

<sup>20</sup> Vryonis S., *The Turkish State and History. New York, 1992, p. 46*. Ա. Խառատյանը, անդրադառնալով Ս. Վրյոնիսի պնդմանը, ավելացնում է, որ օսմանյան պետությունը նպատակ ուներ ծուլման միջոցով հպատակ ժողովուրդների տաղանդն ու ընդունակությունը իրեն ծառայեցնել (**Խառատյան Ա.**, *Կոստանդուպոլսի հայ գաղթօջախը 15-17-րդ դդ.*, Ե., 2007, էջ 341):

<sup>21</sup> Ghazarian V., նշվ. աշխ., էջ 92:

<sup>22</sup> Kocasz S., նշվ. աշխ., էջ 60:

<sup>23</sup> Ortaylı I., *Imparatorluğun en Uzun Yüzyılı, Istanbul, 2005, s. 69*.

ինքնապաշտպանական-ազատագրական որևէ փորձ կատարելու համար: Այս առիթով Թ. Օզալը նշում է, որ թուրքերի կազմակերպած բռնությունները, առավել ևս՝ կոտորածները անօգնական մահմեդականների ինքնապաշտպանական մարտեր են: Ըստ նրա, քրիստոնյաները այս իրավիճակից օգուտ են քաղում և կարեկցանք առաջացնում եվրոպացիների մեջ<sup>24</sup>:

Հայտնի է, որ Օսմանյան կայսրությունում ոչ մահմեդականները դարերով զուրկ են եղել զենք կրելու իրավունքից: Զարմանալի է, որ թուրքական պատմագրությունը փորձում է մարդկային իրավունքի ոտնահարման այս դրսևորումը որպես առավելություն ներկայացնել. «Որքան էլ տարօրինակ է, դարերով զինապարտությունից ազատ լինելը չընդունելով որպես առավելություն և գոհ չլինելով՝ հայերը, մյուս փոքրամասնությունները այս առանձնաշնորհը համարել են իրենց նկատմամբ խորթ վերաբերմունք և, տիրելով զինապարտության իրավունքին, պետության շնորհած զենքով ըմբոստացել են պետության դեմ»<sup>25</sup>:

Այսպիսով, փաստերը ցույց են տալիս, որ Օսմանյան կայսրությունում ոչ մահմեդականներն ունեին միայն ձևական իրավունքներ ու ազատություններ. դա այնքան ակնհայտ է, որ թուրք պատմագրությունը զբաղված է այդ երևույթի բացահայտ կեղծ մեկնաբանություններով:

**ИНОСТРАННЫЕ ИСТОРИКИ О СОЦИАЛЬНО-  
ЭКОНОМИЧЕСКОЙ ЖИЗНИ НЕМУСУЛЬМАНСКИХ  
НАРОДОВ ОСМАНСКОЙ ИМПЕРИИ (XVII-XVIII вв.)**

**БРУТЯН М. А.**

**Резюме**

Вопрос о социально-экономической жизни немусульманских народов в Османской империи по-разному трактовался разными историками. Некоторые историки, к примеру, С. Кочаш, Э. Урас, Т. Озал и другие реформы турецких султанов рассматривают как проявление милосердия к немусульманским народам. По мнению этих авторов, представители немусульманских народов в Османской империи жили в более благоприятных условиях, чем турки у себя на родине. Одним из спорных и трагических реалий было девширме: набор детей в ряды янычар либо флот, взамен выплаты налогов. Турецкая историография пытается представить, что христиане приветствовали девширме. Ряд европейских историков (С. Шоу, Убичини и др.) принимают на веру подобные фальсификации турецких историков.

---

<sup>24</sup> Shaw S., նշվ. աշխ, էջ 49:

<sup>25</sup> Koçuş S., նշվ. աշխ, էջ 60: